

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1932 - Յունիս - Յուլիս - թիւ 6-7

ՆԱԶԱՊԵՏՅԱՆ Հ. Գ. — Քրիստոնէական ճարտարագիտութիւն (պատմական հետազոտութիւններ) 241

ԹՈՐՈՍՅԱՆ Հ. Յ. — Քանի մը խնդրական կէտեր Կորեան գրքին մէջ 255

Սրբազան տաղերգու իւլի. — Տաղ Յարութեան (Ս. Ներսիսի Շնորհաւոյ). — Տաղ Համբարձման (Ս. Գրիգորի Նարեկացոյ). — Տաղ ի Ս. Հոգին (ՅԱնգրիատէ). Հր. Փ. Հ. Ե. 264-5

ՈՐՔԵՐԵԱՆ Ռ. — Լորտ Պայրըն (ուսումն.) 266

ՍՐԱՊԵԱՆ Ա. — Պայրըն ի Ս. Ղազար 272

ԻՐԱԶԵԿ. — Մէկ պատմական կոնգակ 273

ՔԻՒՐԵՏՅԱՆ Յ. — Անտիկ տաղեր և փոփոխակներ (Յովհաննէս Թլկուրանցոյ) 278

Փ. Հ. Ե. — Ղեւտական գրոց յունական մեկնութիւն մը հայ մատենագրութեան մէջ 282

Zanolli Prof. Almo. — Un très ancien commentaire grec sur le Lévitique, conservé en arménien 283

ՄՈՒԹԱՅԵԱՆ ԶԱՐԵՀ. — Վենետիկեան նկարչութիւնը 295

ԵՐԵՄՅԱՆ Հ. Ս. — Սմբատ Բիրատ 301

ՅՈՎՀԱՆՆԵՏՅԱՆ Հ. Վ. — Ծովահարը (Յայրապետի Ստոնաձամօր տաճարին - Salute). 304

ԷՍԱԶԱՆՅԱՆ ԼԵՈՆ. — Արշալոյս 304

ՍՈՑԵԱՆ ՎԱՀՐԱՄ. — Թոյլ ու թեթեւ. — Կեանքի ճանապարհին 305

ԹԵՌՈՐ ՊՈՐԲԵԼ. — Արձագանգը (Թրգմ. Փ. Հ. Ե.) 305

ՏՈՊԱՅԵԱՆ Յ. — Երագ 305

ԵՐԵՄՅԱՆ Հ. Ս. — Համբարձում Երամեան 306

ՔԻՒՐԵՏՅԱՆ Յ. — Մարտիրոս Ղրիմեցի 311

ԹՈՐՈՍՅԱՆ Հ. Թ. — (Յուշատարի մը էջերէն) Գեղեցիկ՛ բայց չար. — Տգեղ՛ բայց անմեղ 312

ԿԱՍՈՒԷ Ա. — Բանախօսութիւն Հայ Երաժշտական արուեստի պատմութեան վրայ (Թրգմ. Ոսկեան Հ. Գ.) 313

Փ. Հ. Ե. — «Le Foyer» ի խմբագրութեան 320

ՓԷԶԻԿԵԱՆ Հ. Ե. — Պետրոս Միրանդեան հայ վաճառականը՝ հիմնադիր Բիզանի կարթնուսեանց վանքին (Չէրթոգա) 322

ԳԱՍՊԵԱՆ Ն. — Ս. Ղազար - Հայոց կղզին (Թրգմ. պուլկարերէն «Միր» թերթէն) 327

ՏՈՊԱՅԵԱՆ Յ. — Ընդունելութիւն ի պատիւ René Pinon ի 328

» Պաշտօնական բացում «Մ. Պէշիկիթաշեան» թատերասրահի 329

ԽՄԲ. — Մուրաթ-Ռաֆայէլեան վարժարանի մարզահանդէսը 331

ՓԷԶԻԿԵԱՆ Հ. Ե. — Հանգիստ հոգոյ Հ. Արսէն վ. Ղ. Ղազիկեանի 333

SOMMAIRE

1932 - Juin - Juillet - numéro 6-7

Nahabédian P. G. — L'Architecture des églises (recherche historique) 241

Thorossian P. J. — Etude sur quelques points de la « Vie de Machthotz » de Goriun 255

Odes Sacrées: A la Résurrection de N. S. (de St. Nerses Chenorhali): - A l'Ascension (de St. Grégoire de Nareg): - Au St. Esprit (d'André): publ. par P. P. E. 264-5

Orperian R. — Lord Byron (étude) 266

Srabian A. — Lord Byron à St. Lazare (poésie) 272

Irazek. — Un document historique 273

Kurdian H. — Poésies populaires arméniennes (inédites) 278

Zanolli Prof. Almo. — Un très ancien commentaire grec sur le Lévitique, conservé en arménien 283

Moutafian Zareh. — Formation de l'Art: La peinture Vénitienne 295

Erémian P. S. — Sempad Purad 301

Hovhannessian P. V. — Sérénade: Le temple de la Ste. Vierge «Salute» 304

Essadjanian Léon. — L'Aurore 304

Sofian Vahram. — Mou et léger. - Au chemin de la vie (poésies) 305

Théodore Botrel. — L'Écho (trad. par P. P. E.) 305

Dobadjian H. — Rêve! 306

Erémian P. S. — Hampartzoum Eramian 311

Kurdian H. — Mardiros de Crimée 312

Tomadjan P. T. — (Quelques pages d'un cahier de notes): Joli mais méchant. - Laid mais innocent 312

Gastoué A. — Conférence sur l'histoire de l'art musical arménien (trad. par Oskian P. G.) 313

P. P. E. — A la Réd. de «Le Foyer». 320

Paitchikian P. Elie. — La Chartreuse de Pise fondée par Petrus Mirantis Parménien, au XIV siècle (1366) 322


Kassabian N. — St. Lazare - l'Île des Arméniens (du journal «Mur») 327

Dobadjian H. — Une réception à Mr. René Pinon 328

» Inauguration solennelle du théâtre «M. Béchtachlian» à Sévres. 329

Réd. — Fête gymnique au Collège Moorat - Raphaël (à Venise) 331

Paitchikian P. E. — La mort du P. Arsène Ghazikian 333



ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՐԱՆՍՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843-1932

ՅՈՒՆԻՍ - ՅՈՒԼԻՍ

ԹԻՒ 6-7

Վ. ԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՏ. Ղ. ՌԵԶԱ-ՌԵԶԲ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ Է

Հեթանոսական մեհեաններու կառուցումն Հայաստանի մէջ

(Շար. տես «Բազմալէպ» 1932, էջ 193)

ԼՂ. Ոչ ոք կրնայ տարակուսիլ որ մեր թագաւորները, Արտաշէս Ա և Տիգրան Բ երեք գերած և բերած հրաշալի արձաններուն համար, որոնք ոչ օտար աստուածոց, այլ իրենց նախնեացն համարելով կամ կեղծելով, անոնց համապատասխան վայելուչ մեհեաններ կառուցանել տուած չըլլան Հայաստանի քարագործներուն: Եւ արդարեւ կառուցել են գեղեցիկներ, փոխազական ըմբոստ նոր իմն ոճով և ճարտարութեամբ, յորս զրոշմած են մեր ըսած հայկական տիպարը, որ այսօր գիտնոց վէճի նիւթ դարձեր է:

Տիգրանաշէն մեհեաններուն մէջ մինչեւ օրս կանգուն մնացածն է Մամախաթուն

գիւղի մէջը, զոր տեսած է Հ. Ղուկաս Խնճիճեան անցեալ դարու սկիզբներն և ինճիճեան հետեւեալը. «Քարաշէն իջեան գրած է հետեւեալը. «Քարաշէն իջեան մեծ, այսինքն խան վան կարաւանաց, ընդմէջ էր գիւղումայ և Երզնկայու ի Շուրնի ձորն . . . բայց երեւին անդէն և ղանի ձորն . . . բայց երեւին անդէն և այլ աւերակը նախնի շինուածոց, բաղանիք և ապարանք անրնակը»:

Ես մեր նախնեաց աւանդութենէն լսած էի որ Մամախաթունի այդ քարաշէն իջեանը սեփականութիւն եղած է Մուշէրիւտան, կոչուած տաճիկներէն, ապա թուրքացիներէն:

1. Հ. Ղ. Խնճ. Աշխ. չորից մասանց աշխարհի - Ա.Ի.Կ. էջ 97. Վ.Ե.Ե.Կ. 1806:

ՐԱՆՍՍ. ՅՈՒՆԻՍ-ՅՈՒԼԻՍ 1932

ճարտարապետութիւնը, Տեկորի տաճարը», ուրախ եմ որ համաձայն կը գրտնուինք ենթադրելու՝ թէ քրիստոնէութիւնը չքանդեց եւ չջնջեց մեհեանները, այլ սրբուեցան և նուիրուեցան Աստուծոյ պաշտաման և ծառայութեան: Ուստի Տեկորու, Երերուքի և Քասախի (Պաշապարան) եկեղեցիներուն հետ պիտի յիշէի նաեւ Շիրակայ Յիցք (Պիրակար) գիւղի հին եկեղեցին, որու նկարագրութիւնը տուած է Պր. Ատրպետ 1911 թ. «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ, ուր կը բաժանէ հեթանոսական ժամանակի կերտուածքը, հետագայ վերածումներէն՝ եկեղեցւոյ ձև տալու համար:

Վերեւ յիշուած օրինակները և ուրիշներ, որ քննուելիք են, մանաւանդ Պարանաղի և Եկեղեաց գաւառներուն մէջ, աւելի ցայտուն նմոյշներ պիտի յայտնուին նախաքրիստոնէական հայկական ճարտարապետութեան: Հ. Ղ. Ինճիճեան իր ճանապարհորդութեան ժամանակ տեսած է կամախի կամ Անիի ամրոցին մէջ վեց քարաշէն եկեղեցիներ որոնք, կ'ըսէ, տակաւին կանգուն կան, ափսոս որ զանց քրած է փոքրիկ նկարագրութիւն մը տալու թէ ինչ ձևի շինուած էին: Այնուհանդերձ ճարտարապետ Թ. Թորամանեանի ուսումնասիրութիւններն և այլ ուսումնասիրելի հնութիւններ, բաւական են հաստատելու թէ Պարէն առաջ Հայաստանի մէջ կար ինքնուրոյն նկարագրով ճարտարապետութիւն մը գմբէթաւոր և սագաշէն մեհեաններու, որոնք յետոյ Եկեղեցւոյ ծառայութեան նուիրուեցան Գրիգորի և իր յաջորդներուն ջանքերով:

ԱՅ. Հարեանցի դիտելով հայ ճարտարապետութեան շրջանները, մենք կարող ենք որոշել նախնական դարերէն սկսեալ Առաջինը՝ Հայկական շրջանը մօտաւորապէս երկու հազար տարի Ն. Ք. մասնաւորապէս Ուրարտական թագաւորութեան շրջանը, որուն կեդրոնը կը բովանդակէ Վան քաղաքը: Այն ամէն շինութիւնը որ եղած են Վանի մէջ և շրջակայքը, Խորենացի հետեւելով Եւսեբիոսի Քրոնի-

կոնին, կ'ընծայէ Շամիրամայ, որուն գոյութիւնը պատմականօրէն խնդրոյ տակ է. իսկ Երոպացի գիտուններու պեղումները դուրս բերին որ այդտեղ եղած է քաղաքակիրթ հզօր ազգ մը, ուստի Վանի մեծագործութիւնները կը պատկանին նոյն երկրի տիրապետողներուն, ասոնք եղած են Հայաստանի նախապատմական բնակիչները, որոնք յետոյ գրաւոր պատմութեան մէջ հասեր են մեզի՝ Հայկի և իր որդւոց անունով: Այդ ժայռերուն մէջ փորոզներն եղած են քարուտ երկրի բնակիչներ, որոնք վարժ վարպետներ եղած են քարահատութեան, քարտաշութեան, կռանելու և կոփելու արուեստին տէր ասոնք կրնային ըլլալ միայն Հայաստանի բնակիչները, որոնք Փոփոզիոյ նախապատմական գաղթականութեանց հետ այդ արուեստները բերին իրենց հետ. նոյնպէս Արեւելքէն եկող արիներն արուեստաւորներ էին:


Աստուածաշունչը, դարբին պղնձի և երկաթի կը կոչէ կայէնի որդիներէն թորէլը. «Եւ Սելլա ծնաւ զթորէլ. և էր ճարտարապետ դարբին՝ պղնձոյ և երկաթոյ» (Ծն. Գ. 22): Արդ, կայէն անէճճէն վերջ հեռացաւ Աստուծոյ երեսէն. «Եւ վերջ հեռացաւ յերկրին Նայիդ՝ յանդիման Եղեմայ» (Ծն. Գ. 16): Մինչեւ որ գիտնականները գտնեն Հայաստանէն դուրս Եղեմը, մենք իրաւունք ունինք հաստատ մտալու որ երկիր Նայիդ, գիտնոց Նայիրին է, որ է Հայաստան. և որովհետեւ ջրհեղեղէն վերջ Յարեթի վիճակեցաւ Հայոց երկիրը, հետեւաբար տեղացիները շինած են Վանի մեծագործ ամբարտաւոր ժայռին մէջի վիմափոր սենեակները և իր Բարեկացիք Շամիրամի կարծուած դարձնել քարի կամ աղիւսի հետ, կրի շաղախը գործածել չգիտէին, այլ կուպր. «Եւ ասան այր ցընկեր իւր. եկայք արկիցոք աղիւս, և թրծեսցուք զայն հրով. և եղիւ նոցա աղիւսն ի տեղի քարի և կուպրի տեղի շաղախոյ» (Ծն. ԺԱ. 3): Շամիրամ կրնար այրասիրտ ըլլալ, վիպասանները կրգերու մէջ, բայց ուսկից կրնար գրտն-

նել հազարաւոր ընտրուած «արուեստաւորներ գործաւորներ փայտի՝ և քարի, պղնձոյ և երկաթոյ» երբ Ասորեստանի մէջ ոչ փայտ և ոչ քար, ոչ պղնձ և ոչ երկաթ ունէին. իսկ լեռնային երկրի մէջ ամենայն ինչ պատրաստ կար, որով Շամիրամ կամ Ուրարտական թագաւորը կրնար հրամայել, և Հայաստանի մէջէն մինչեւ Միջերկրեայք. «վաղվաղակի ածեալ լինէին բազմութիւն խառնիճաղանճ գործաւորացն և ԲԱՍՏԱՐՈՒԵՍՏԻՑ ՀԱՆՃԱՐԵՆԱՅ ԻՄԱՍՏՆՈՅՆ»: Ամբարտաւի շինութեան նկարագրին. «Ապառաժիւք և մեծամեծ վիմօք շինեալ, կրով և աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ». սեմական ցեղի կաշիի մէջ չի մտնէր, այլ արիական ցեղին, որուն նմանը կարելի է տեսնել Հոմի մէջ, Cloaca Massima կոչուածը, զոր Ետրուրացիք կառուցին գրեթէ եօթհարիւր տարի Ն. Ք., և մինչեւ ցայսօր կը տեսէ, ինչպէս Վանինը մինչեւ Խորենացւոյն ժամանակ և մինչեւ մեր օրերը:

Երկրորդ շրջանը կը սկսի Արշակունեաց թագաւորութեան ժամանակ: Խորենացի վաղարշակին շատ բան կ'ընծայէ երկրի բարենորոգութեան մասին. ամենայն ինչ նորութիւն կը շնչէ չորս բուրբ և ինքն է ամէն բանի թելադրողը, կարգադրողն և սորվեցնողն այսպէս. «Բազում ինչ աստ կարգաց և յօրինուածոց, տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց» ևն. , հրամայած է և կատարուած: Նախարարական տուներու հաստատութիւնն և զանազան բարձրութիւնը որոշումը երկար տարիներ կազմեց վաղարշակի թագին պարծանքը: Վաղարշակին կը վերագրուի նոյնպէս մեհեաններու պաշտամունքներու նորոգութիւնը, քրմութեան պատիւը տալով Վահագնի որդւոց, որոնք ցեղովին հրոյ և արեգական պաշտօնեաներ էին. ինքն ևս մեհեան կը շինէ Արմաւիր, սա զարմանալի բան չէ. բայց զարմանալին այն է որ «անդրիս հաստատե արեգակս և լուսնի և իւրոց նախնեաց»: Արեգական և լուսնի

անդրինները՝ մարդակերպ եղած են, որ է լուսնի Ապոլոնի (Որմզդի) և Անահայ: Ուսկից բերաւ. ոչ Պահլաւիկներու և ոչ ալ Ասորեստանցւոց երկրէն: Մեկնութիւն մը տալու համար պիտի յիշեցնեմ այն կարծիքը որ վաղարշակ ծննդեամբ Պահլաւիկ չէր, այլ որդեգրութեամբ Արշակ Մեծին՝ ստացած էր Պարթև արշակունի և Պահլաւ կոչումը: Նա բնիկ Հայկայ ցեղէն էր և Տէր Անգեղ Տան կամ Չորրորդ Հայոց: Ծոփաց աշխարհի նախարարները Հայոց թագաւորներ կը կոչուէին: Մեծին փոքր թագաւորներ կը կոչուէին: Մեծին Աղեքսանդրի շնորհիւ, Հայաստանի կառավարութիւնը միաց Հայ իշխաններուն ձեռքը, որոնց վրայ նախանձելով դիւցազնի վատ յաջորդները, ուզեցին մէջտեղէն վերցնել. անոնք փախան և Պարթևաց թագաւորներուն արքունիքն ապաւինեցան, և այլն, ինչպէս այլուր գրած ենք: Որով վաղարշակ Անգեղ տան տէր, անոր նախնեաց ժամանակէն յարաբերութիւն ունեցած են կապաղովկիոյ և Փոքր Ասիոյ ժողովուրդներու հետ և ընդելացած անդրիներու պաշտամունքին, մանաւանդ որ իրենք իսկ, Բագրատունիք, քրմապետութիւն ունէին, ուստի վաղարշակ տիրութիւն ունէին, ուստի վաղարշակ տիրութիւն ունէին: Նախարարական մէջ մեհեան շինեց և արեւի ու լուսնի պատկերներ դրաւ անոր մէջ, այսինքն Ապոլոնի և Անահիտի:

Վաղարշակի որդիք և յաջորդներն ոչ սակաւ նախանձախնդիր եղան Հայաստանի բարգաւաճման և յառաջադիմութեան, որոնց մէջ հանճարով և մեծագործութեամբ փայլեցաւ Տիգրան Մեծն. զերագանցեց քան հայրը գեղարուեստական ճաշակով և հելլենասիրութեամբ. իր արքունեաց մէջ յունարէն լեզուն ընտանեցած էր, այնպէս ինչպէս երբեմն Ֆրանսիայէն լեզուն Երոպական արքունիքներու մէջ, իբրև բարձր քաղաքակրթութեան յայտարար. մինչեւ անգամ որդին Արտաշէսը նախընտրեց մատենագրել և բանաստեղծել յունարէն լեզուով քան հայերէնով՝ այլ ազգերու գրերով. իբր թէ Գողթան երգիչներու լեզուն նուազ դաշ-



Սարաւոյթ Տրդատայ

նակաւոր և քաղցրահնչիւն ըլլար յունա-
րենէն: Տիգրանի նախանձը բարի մեկնելով
պիտի ըսենք որ նա Աղձնեաց աշխարհին
մէջ շինեց Տիգրանակերտ քաղաքը և լե-
ցուց յոյներով, հոյակապ պալատներով և
թատրոնով, կրկեսով եւն. որպէս զի ար-
տակերտն հայերը կրթէ, ինքնաճանաչու-
թեան բերէ և կեդրոնի հայութեան հետ
միացնէ: Պլուտարքոս կը յիշէ թէ Տիգ-
րանակերտի մէջ Եսթրիլէսի Պրոմեթէոսը
թատրոնի մէջ խաղացած ժամանակ յան-
կարճ կրասոսի զուգը բեմի վրայ կը
բերուի, որով Հռոմայեցոց կրած չարա-
չար պարտութիւնը կ'աւետէր դերասանը:
Սակայն Տիգրան վերին Հայաստանի մէջ,

թող իր կառուցած գեղեցիկ մեհեանները
ըստ արժանւոյն բերած կամ գերած պը-
ղնձաձոյլ արձաններուն, Տիգրանակեր-
տէն բերած է նաև յոյն ճարտարապետ
արուեստաւորներ և շինել տուած է Գառնիի
Հովանոցն արժանավայել հանգրուան այն-
պիսի մեծ թագաւորի:
Չանագան են կարծիքներն այս շինու-
թեան մասին, սակայն մեզի հաւանական
թուեցաւ վերագրել զայն մեծագոր ար-
քային, որ Պարսից և Հայոց նախագա-
հութիւնը պահեց և բարձրացուց: Մամա-
խաթունի Մեծ Խանը և Գառնոյ թախտը
կամ Հովանոցը կրնար շինուած ըլլալ
միմիայն Մեծն Տիգրանի ժամանակ:

Թողում Մամախաթունի մեհեանի քննա-
դատութիւնը, վասն զի ոչ մի նշխար և
նշմար չունիմ աչքի առջև, բայց Գառնիի
ապարանքի ընդորինակութիւնները կան,
շնորհիւ Եւրոպացի ճանապարհորդ ճար-
տարապետներու, մանաւանդ Հելուեացի
Իւրոսա զը Մոնպէրէոյի: Գէր Բորդըր
ըսեր է աւերակներու մնացորդներու մասին.
«Յոյժ հետաքննելի նշխարներ», «չքեղ
ձեւեր հին ճարտարապետութեան»: Խո-
ւրովիդիստոյ Հովանոցը մինչև 1423 կան-
գուն էր իր արքայական շուքով և շնորհ-
քով. թշնամեաց պիղծ ձեռքեր չհասան
հոն, այլ բնութեան երկրասասան ոյժը
կործանեց, ուակից բռնաւորներն ալ ահով
դողով կը սարսին ոճրապարտ խղճով:

Մեծն Տիգրան, աշխարհափորձ զլուխ,
տեսաւ որ Արտաշատու դերքն այնքան
ամուր չէ Հռոմայեցոց պէս մարզուած
զինուորներու յարձակման, ուստի իր
տանը և արքունի գանձերուն ամուր տեղ
մը փնտռելու ելած ժամանակ, Գառնին
իւր ամուր և անառիկ դերքով յարմար
թուեցաւ, անոր վրայ աւելցուց արուես-
տականը, որուն նկարագիրը կու տայ
Տրդատայ ժամանակի պատմիչը, որ կը
սխալի, և պէտք էր ըսել Տիգրանայ
համար, վասն զի շինութեան ոճը դեռ
Օգոստեան դարուն կը պատկանի, և Փոքր
Ասիա իր ճարտարապետական ոճը կոր-
սնցուցած էր մինչև Գ դար, Հռոմէական
տիրապետութեան ներքեւ:

Արդարեւ հայ պատմիչ գրածները «կա-
տարէ զշինուած ամրոցին Գառնոյ, զոր
որձաքար և կոփածոյ վիմօք, երկաթա-
զամ և կապարով մածուցեալ» պարխու-
ներն և բուրգերը շինուած են խանձաքար
(բազալտ) ժայռերու մեծամեծ կտորներով:
Նոյնը Տակիտոս գրած է. «Բերդի տեղն
և դերքը ամուր է», կը հասկցուի ինք-
նին պարխապով և աշտարակներով անառիկ
գործուած: Այսքան ի բնէ ամուր տեղն
ու դերքը չէր կրնար վերաբեր Տիգրանի
աչքերէն՝ որ արուեստական կերպով ալ
ամրացուցած և միշտ Հայ թագաւորներու
խնամքի տակ գտնուած է իրենց գանձե-

րուն ապահով պահպանութեան համար,
ուստի երեքհարիւր տարի վերջ այնպիսի
ճախուց և աշխատութեանց իբր թէ են
թարկուած է Տրդատ «որձաքար և կո-
փածոյ վիմօք, երկաթազամ և կապարով
մածուցեալ» շինած այդ սարաւոյթը, շատ
զփուար է, զի անոր ատեն այդ ոճի շի-
նութեանց արուեստն ինկած էր:

Բայց բերդի մեծղի շինուածքէն աւելի
իր հնարեալ մասին կը խօսի արուեստը,
ճարտարապետական գեղեցկութիւնը, քան-
դակներու նրբութիւնն որով յոյնական
արուեստին զլուխ գործոց մը կը հանդի-
սանայ: Տիգրան Տիգրանակերտը աւար-
տեղէն վերջ շատ հաւանական է որ նոյն
արուեստաւորները բերաւ Գառնի և անոնց
յանձնեց Պալատին և Հովանոցին շինու-
թիւնն ալ: Յոյն ճարտարապետ արուես-
տաւորի մը ձեռքերը միայն կրնային փորա-
զրել այնքան փափկութեամբ և ճաշակով
որձաքար պարզա ջարի վրայ, այսօրինակ
գծագրութեան արուեստը չեմ կարծեր որ
այնպէս զարգացած ըլլար Հայաստանի
մէջ, մինչև կարիոյ և Պերզամոնի դը-
պրոցներու գործերը, Ատտիկեան դարու
թարմութեամբ՝ Հայաստանի մէջ շարու-
նակած ըլլար մինչև քրիստոնէութեան
Գ դարը:

Գարձեալ ականատես գծագրող և նը-
կարագրող ինքն Իւրոսայնկապետով հո-
վանոցի փոքրկութիւնը, կը տարակուսի
որ բնակութեան համար շինուած ըլլայ,
և կը համարի թէ Անահտայ տաճար մ'ե-
ղած է, Եւ շատ հաւանական է, վասն
զի Տիգրան իր սիրած տեղոյն վրայ ան-
շուշտ կանգնած է գեղեցկագոյնը իր բե-
րած արձաններէն: Եթէ Ագաթանգեղոս չի
յիշեր զայն, յայտնի է պնտաւոր: Գառ-
նին արքունի սեփականութիւն ըլլալով,
հարկ տեսնուած չէ արտաքին ցոյցով մը
կրնար ընելու Անահտայ պատկերը՝ եր-
կրորդ, եթէ Տրդատ նախ քան հաւատաւն
ի Քրիստոս, արդէն պարգեւ տուած էր իր
ընդ խոստովիդիստոյ, նա որ յամենայնի
գործակից եղաւ իր եղբոր և Գրիգորի
Հայաստանի լուսաւորութեան և զարձին

ճշմարիտ հաւատքին, նախ քան Գրիգորի ձեռնադրութիւնը, նա սրբած ու մաքրած էր իր բնակավայրը կոապաշտական յիշատակներէն, և Տրդատի աջողակ քարտուղարն առիթ չունեցաւ խաղցնելու իր գրչի երիվարը Գառնոյ հրապարակին վրայ: Ո՛ր գիտէ, երբ ի՞նչ. Հայաստանի պետութիւնը Գառնին մանրազնին խուզարկութեան ենթարկէ, գուցէ բերդի գաղտնածածուկ գետնափոր նկուղներու մէջ գտնեն Անահտայ կամ Ապողոնի մը արձան, խնամքով պահուած խորիմաստ Հայաստանի կոյս օրիորդ Խոսրովի դուխտէն, որպէս զի օր մը մասնաւոր համակրութեամբ Հայոց ժողովուրդը դիտէ և սխրանայ ձեռագործ և անձեռագործ գեղեցկութեանց վրայ:

Եթէ պատմական տեղեկութիւն մ'ալ ուզենք աւելցնել ի հաշիւ Մեծին Տիգրանայ, հրաւիրելով սրամտագունի մը ուշադրութիւնն այն պարագային վրայ, որ երբ Տիգրան վերին Հայաստանի մէջ կը գտնուէր, զբաղած Գառնոյ բերդին շինութեամբ, Լուկուլլոս զրօնով բարեկամութեան, իր կտորած դիրքը շակելու համար Հոռոմի Ծերակոյտին առջեւ, գաղտագողի կը յարձակի Տիգրանակերտի վրայ, և յոյներու մատնութեամբ կ'առնէ քաղաքը. բնակիչներէն շատը բերուած էր փոքր Ասիայէն, տոգոհ իրենց կեանքէն՝ կը լքեն քաղաքը և Լուկուլլոս կը հըրդենէ, կտրելով Տիգրանի յոյսն անդրէն շէնցնելու: Ապերախտութիւն անհամեստ պարզեց փորի փոնթերը. բայց Ծերակոյտը չխաբուեցաւ, և խայտառակարար ետ կոչեց Լուկուլլոսը¹, և տեղը զրկեց Մեծն Պոմպէոս, որ գտաւ Տիգրանը ոչ թէ թշնամի՝ այլ բարեկամ (նիզակակից) Հոռոմայեցոց, և վերահաստատեց խաղաղութիւնը:



Տիգրան Աւրակոնուոյ գրամ

որուն կրնայ վկայել Տիգրանի այս դրամը, որ զինքը կը ներկայացնէ յաղթական զինքի մէջ, արմաւենին ձեռքը բռնած՝ ի նշան յաղթութեան և խաղաղութեան:

Տիգրան ոչ միայն անձնական պաշտպանութեան համար շինեց Գառնոյ բերդը, այլ առաւել, ըսինք, մտահոգուած էր հոռոմէական ընչաքաղցութենէն ազատելու թագաւորական գանձերը, նոյնպէս և անոնց մէջ պահուած ոսկի և արծաթ կուռքերը:


Ուստի Տիգրան իր դիզած գանձերն և թանկագին իրեղէններն ապահովելու համար, կը համարիմ բանաւոր պատճառներով, այսօրուան Այրի-Վանքի վիմափոր թաքստոցները շինել տուած է ի սկզբան գանձատուն, որ յետոյ միջին դարերու մէջ ալ կատարեց նոյն պաշտօնը, զոր բռնաբարեցին Հագարացի ոստիկանները: Եթէ մէկը մտածէ որ եգիպտական ոճով դամբարան փորուած ըլլայ նախապէս ուրարտական դարերուն, չի սխալիր:

Երբորդ շրջան ճարտարապետական շինութեանց կը համարիմ Երուանդ Բ Արշակունիին, որ Արմաւիրէն արքունիքը փոխեց Երուանդակերտ (միջնաբերդը) և Երուանդաշատ քաղաքը, Երասխայ ձորի բերանն ուր Երասխ և Ախուրեան խառնուելով իրարու հետ ընդարձակ եռանկիւն մը կը կազմեն: Միջնաբերդի նկարագրութիւնը զոր ըրած է Խորենացի, ունի ճարտարապետական և մեքենական արուեստի խոր հմտութիւն. պարսպի ներսը պղնձէ դռներ կը շինէ, երկաթէ սանդուխներու առջեւ, որ վարէն մինչեւ վեր կը տանէր միւս երկաթէ դուռը, որ կը մտցնէր միջնաբերդի ներքին բնակարանները. ասանդուխներու մէջտեղուանը՝ յարմարեցուած էին ինքնաշարժ որոգայթներ աստիճաններու տակ ծածկուած, որպէսզի զաւուրներ եթէ գաղտագողի ներս մտնել ուզէին՝ որոգայթներու մէջ բռնուէին:

1. Լուկուլլեան պարտէզներու լաւագոյն տեղւոյ վրայ կը գտնուի այսօր մեր Վ. հնետ. Միլիթարեանց Հիւրանոցը՝ նախկին Capo le case, այժմ Fr. Crispi փողոցի վերջ: Չուրը զնայ, աւագը մնայ:

Երուանդի շինած «Ելանելիք»ները արդեօք նման էին Հոռոմի կոլոսէոնի տակ շինուած Ելանելիքներուն, որով աստիճանաւոր վանդակներով գազանները վեր կը հանէին, կրկէսի խաղերու կամ գազանա-

դաւել կամիցի զարքայն: Եւ էր, ասեն, երկդիմի. որպէսզի մինն լիցի սպասաւորացն արքունի և ամենայն Ելանելից ճանապարհ տուրնջենային, իսկ միւսն զգերային և մարդադաւացն:



Յատակագիծ Այրի-Վանայ եկեղեցւոյն

Այս յատակագծի վրայ ուշադրութեամ առնելու է այժմ մասը որ փորուած է ուղղակի ժայռին մէջ և մշտնակուած են Գ. Դ. Ե. Զ. Է. զրերով. միւս մնացածները քրիստոնէական ժամանակի շինութիւններ են. չոս խօսքը հմագիտութեամ կ'իյնայ, եթէ տեղւոյն վրայ քրմութիւններ ըլլան, որ պիտի կարենայ ապացուցանել թէ արդեօք Ուրարտական յաղթող Ռուսաս (Արմենակ) թագաւորի գերեզմանն է թէ Տիգրան Մեծի գանձատունը:



ճարտութեան համար: «Չմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպը, և զրունս պղնձիս կանգնէր ի միջոցի պարսպին, և Ելանելիս երկաթիս՝ ի ներքուս ի վեր մինչեւ ցրուանն. և ի նմա որոգայթս իմն ծածուկս ընդ մէջ աստիճանացն, որպէս զԵլանելիցի՝ թէ ոք գաղտ ելանելով

Երուանդեան դաստակերտի բնական և ճարտարապետական նկարագրութիւնն ըսքանչելի է. Խորենացի զայն քաղաք է անպայման զԵրուանդ փառաբանող Հայ

1. Վերելակի (ascenseur) վերամբարձ մեքենայով օգտուելի են Հայերը 18 դար առաջ:


կէն, խանգարուեր էր և իր նպատակին չէր ծառայեր, ուստի հոգ տարաւ աստղաբաշխութեան վրայ հիմնուելով, ճշտել արեւու ընթացքը տարեբոլոր շրջաբերութեամբ, լուսնի ամսօրեայ փոփոխութիւնները և հաստատել ազգային տօներու անշարժութիւնը: Մինչեւ այն ժամանակ ուրիշ ազգերու տօմարը կը գործածէին, և միշտ կը սխալէին, վասն զի անիկա անհամապատասխան էր Հայաստանի կլիմային և աշխարհագրական դիրքին: Կարճ խօսքով, երկրագործութիւնն այն աստիճանի յառաջադիմեց որ « կ'ըսուի թէ Արտաշէսի ժամանակ անմշակ երկիր չէր գտնուեր Հայոց աշխարհքի մէջ, ոչ լեռնային և ոչ դաշտային, այնպէս շէն էր երկիրը »: (Խոր. Բ. ԾԹ.): Գիտութենէ թափուր էին և անփոյթ, Արտաշէսի ջանքերով գիտուններ հասան և անոնց ձեռքով կարգաւորեց « զշաբաթուց ասեմ և զամսոց և զտարեաց բոլորմունս »: (Խոր. Բ. ԾԹ.): Նմանապէս Արտաշէսի ժամանակ մեր աշխարհի ծովակներու և գետերու վրայ նաւագնացութիւն կը հաստատուի, և ձկնորսութեան արուեստին ալ խնամք կը տարուի, և ամէն տեղ, ինչպէս ըսինք, երկրագործութիւնը սիրելի եղած էր ժողովուրդին, որով թիզ մը պարապ գետին չկար այդ երջանիկ օրերուն:

Մեծ և քաջատոհմիկ թագաւորը, Տօմարայիրը Հայոց, իր բազմաժխոր կեանքին մէջ չէր մոռնար կրօնական բարեպաշտութիւնը. եղած է նաեւ մեհենասէր, Երուզաբի տեղը նշանակելով իր մէկ ազգականը, Մոզպաշտէ կոչուած. և երբ մահաբեր հիւանդութենէ բժնուեցաւ իսկոյն սուրհանդակ մ'ուղարկեց Եկեղեաց գաւառ, աղաչանք և պաղատանք մատուցանել Անահիտին իր կեանքի և առողջութեան համար. կը հաւատար հրաշքն ընդունելու անկից որ կեցուցիչ էր Հայոց աշխարհին:


Արտաշէս իր « առաքինութիւններով և ուղղութիւններով » զինքը սիրելի ընծայած էր Ազգին, ժողովուրդի սիրտը կապեր էր իրեն հետ, և այդ բանը յայտնի եղաւ հանդիսաւոր թաղումի ժամանակ, մինչեւ

իսկ անոր գերեզմանին վրայ ինքզինքնին զոհողներ՝ եղան: Կը համարիմ որ իր բարերարեալ արուեստագործները պատրաստած են թաղման հանդիսին պատկանեալ արդուզարդը, յորում հայ մտքի և ձեռքի ստեղծագործող ճարտար և արտապետական մանրանկարներ ցուցադրուած ըլլային: Օտար պատմիչ մը հիացած Հայոց քաղաքակրթութեան և զարգացումի վրայ կը գրէ. « Որպիսի շուք բազմադիմիս արարին առ ի պատիւ դիտք քաղաքական կարգօք և ոչ որպէս զբարբարոս »: Սա մի Յոյն կամ Հռոմայեցի բարոս: Սա մի Յոյն կամ Հռոմայեցի եղած է, որոնք իրենցմէ դուրս միւս ազգերը բարբարոս կը կոչէին: Եւ կը շարունակէ. « Դագաղքն էին ոսկեղէնք, գանձեր և անկողինք բեհեգեայ, և պատմունքանն որ զմարմնովն՝ ոսկեթել. թագ կապեալ ի գլուխն և զէնն՝ ոսկեով առաջի եղեալ և զգահոյիւք շուրջ՝ որդիքն և բազմութիւն ազգականացն, և առ այսոքիւք պաշտօնէիցն զինուորութիւնք և նահապետք նախարարութեանցն գունդք և միանգամայն զօրականացն վաշտք, ամենքն կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին... Եւ այսպէս տարեալ թաղեցին »: Հանդիսաւոր թաղում մը արժանաւոր և վայել Հռոմէական պետութեան, որ իր հայրենիքի երախտաւորն այսքան գերապանծ շքով կը փողոցէն անցընելով Արէսեան դաշտը կը տանէին, յետոյ կը դրուէր իրեն յատուկ դամբանը: Հոռմ այսպիսի փառահեղ յուրկաւորութիւն կատարեց իր իմաստուն և սիրելի կայսեր՝ Մարկոս Աւրելիոսի, և լացաւ Հոռմի փառքը, վասն զի որդին, կոմոզոս՝ անարժան գտնուեցաւ հօրը ռանգութեան: Կարծես իսկար Արտաշէսի անէծքն ընդունեցաւ իր գլխուն, երբ հայտնուեց փառք գերեզման կ'իջնէր:

Այս թաղմանական հանդէսն և նկարագրած արդուզարդը գեղարուեստական զարգացած և նուրբ ճաշակ ցոյց կու տան որուն անբաժան կ'ընկերանայ և ձուրտաբայկտական արուեստը որ երթալով պիտի




Յուդարկաւորութիւն Արտաշէսի



Ս. Յովնանէս Բագրեւանդայ

Բերեղանայ հայկական ոճի կատարելութեամբ մինչեւ Ե դար: Արտաշէս Բ ի կը յաջորդէ կրօսեր որդին Տիգրան. որովհետեւ եղբոր սպանման պատճառ եղած էր, յանցանքը բաւելու համար, կը պատմէ Բարդաճան, որ Հա-


յոց մեհենական պատմութիւնը գրեց, թէ իր քրմապետ Մաժան եղբոր գերեզմանին վրայ մեհեան շինած է Բագաւանի մէջ, և բազին կանգներ է զոհերու համար, ուսկից ամէն անցաւորը կը վայելէին և հիւրերը կը գիշերէին հիւրանոցին մէջ:



Նման իջեւանատուն մը գեղեցիկներու մնացեր է տակաւին խօշափանքի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ մօտ, Շիրակ գաւառին մէջ, ուսկից գուշակելու է Բագաւանին :

Տիգրան Գ թագաւորաւայել շէնք մը կառուցած է անշուշտ ի յիշատակ եղբորը, յորում կազմեց գերեզմանը. շինուածք մը որ հեռուէն նմանէր Աղիկաւանսի Մաւսուլէոնին. իսկ այսօրուան Բագաւանի գմբէթաւոր տաճարը հեռուէն կը պահէ Տիգրանաշէն մեհեանի ուրուագիծը : Նորոգութիւն մը ի հիմանց (?) եղած է Հերակ կայսեր արշաւանքներու դարուն (634 թ.). այն է, կը համարիմ, որ նախկին գմբէթաւոր մեհեանը, Ս. Հովհաննէս տաճարի ոճին վրայ, անվարժ քարագործներ ընդարձակ ծածքը բռնելու համար, ստիպուած՝ դրած են կեղրոնական չորս հաստ կոպտար սիւներ և անոնց վրայ բռներ են տափարակ գմբէթ մը, կարճ լիկ թմբուկով մը : Դուրսի պատերուն սեւութիւնը նման է Տեկորի տաճարի պատերու կէսի սեւութեան, ինչ որ ցոյց կու տայ շինութեան շատ հնութիւնը. իսկ ճարտարապետական հնութիւնն ստուգելու համար կը կարօտինք Տեկորի տաճարի նման ուսումնասիրութեան մը՝ մեր տաղանդաւոր թ. թորամանեան ճարտարապետի կողմէն :

Վաղարշ զէնք շարժելու մէջ քաջ, շինարարութեամբ ալ գուցէ քաջագոյն հան-



Կարաւանատուն Հովուակամուրջի մօտ

դիսանար եթէ երկարակեաց լինէր. այնուհանդերձ երկու շատ կարեւոր յիշատակներ թողեր է, որ կարելի է ստուգապէս իրեն համարել, մէկը՝ Հովուի կամուրջ կոչուածը, միւսը՝ Կարաւանատուն նոյն հովուակամուրջին մօտիկ :

Վաղարշի ծնունդը վիպական է, և ինքն իսկ թագաւորն ուզեց յիշատակ թողուլ յետնոց իր ձեռակերտ աւանը, զոր կանգնեց ծնած տեղոյն վրայ, հոն՝ ուր Մուրց և Երասխ գետերն իրարու կը խառնուին, և կոչեց Վաղարշաւան, մեծ դաստակերտ, և կոչեց խորենացի կոչած էր Առան մեծ : զոր խորենացի կոչած էր Առան մեծ : Մեր տկար կարծիքով պէտք է իրաւունք տալ այն պատմիչներուն որոնք կամուրջը Վաղարշին կը վերագրեն. վասն զի անոր մօտիկ կարաւանատունը տաճարածեւ ոճով շինուած կը բովանդակէ ութ կ'ըր սիւներ, որոնք նման սրակամար կապուած են իրարու հետ :

Հովուակամուրջի կարաւանատունը նախաքրիստոնէական ճարտարապետութեան նմոյշներէն մին պէտք է համարել Տեկորու, Երեւուքի, Քասախի եւն. եկեղեցիներու հետ, որոնցմէ ոմանք վերածուցանուած զգմբէթաւոր դարձան, մինչեւ ի դարձուցուած ճարտարապետական թէ Մեր նախնեաց ճարտարապետական մնացորդներէն կարելի է գուշակել թէ շինուածական արուեստը որքան զարգացեր էր Հայոց մէջ : Նախնի քարագործներն աւսամբ հասեր է իր սրտի բաղձանքին, նա իր տեսանելի Արեւին համար կերտեր էր գմբէթ մը երկրիս համար ընդհին հետ կապած : Գ դարուն պիտի առնէ վերասլացիկ խոյանքն և ձօնի առկախ երկնքի բարձրութիւնն «գունակ գերամբարձ երկնանման գնդին» :

Մեր նախնեաց ճարտարապետական մնացորդներէն կարելի է գուշակել թէ շինուածական արուեստը որքան զարգացեր էր Հայոց մէջ : Նախնի քարագործներն աւսամբ հասեր է իր սրտի բաղձանքին, նա իր տեսանելի Արեւին համար կերտեր էր գմբէթ մը երկրիս համար ընդհին հետ կապած : Գ դարուն պիտի առնէ վերասլացիկ խոյանքն և ձօնի առկախ երկնքի բարձրութիւնն «գունակ գերամբարձ երկնանման գնդին» :

Հ. Գ. ՆԱԿԱՎԱՆՆԵՐ

(Շարունակելի)

ՔԱՆԻ ՄԸ ԽՆԴՐԱԿԱՆ ԿԷՏԵՐ

ԿՈՐԵԱՆ ԳՐՔԻՆ ՄԷՋ

(Շար. տես «Բազմավէպ» 1932, էջ 148)

Թ

Հայ գրերու գիւտին թուականը

Մեր գրերու կամ այբուբենի գիւտի թուականի մասին այնքան գրուած ու խօսուած է, որ անտարակոյս շատերէն աւելորդ կամ անօգուտ պիտի դատուի անգամ մ'ալ այս խնդրոյս վրայ դառնալը : Սակայն, որքան գիտեմ և որքան թոյլ կու տայ ինձի յիշողութիւնս, ընդհանրապէս մեր բանասէրներուն մեծամասնութիւնը՝ եթէ ոչ ամէնը՝ այն եզրակացութեան յանգած են, որ Մաշթոց հայ տառերը ստեղծեր կամ յօրիներ է Քրիստոսի 404 թուականին, այն է՝ մեր վրամշապուհ թագաւորին վեցերորդ տարին, և կամ՝ որ նոյն է՝ Պարսից Յազկերտ Ա թագաւորին ոչրերորդ տարին, հիմնուելով կորեան վկայութեան վրայ : Արդ, այս մասին տարբերելով իմ տեսութիւնս յիշեալ բանասէրներուն կարծիքէն, թոյլ պիտի տրուի ինձի անշուշտ պարզելու հոս համառօտութեան տեսութիւնս, որ կը հիմնուի նոյնպէս կորեան վկայութեան վրայ : Հետեւաբար, ինչպէս ըսի նախորդ յօդուածիս մէջ, երեք խնդիր կայ հոս պարզելիք .

- 1) Հայ տառերուն գիւտը արդեօք վրամշապուհ թագաւորին ճիշդ վեցերորդ տարին կատարուած է.
- 2) Յազկերտ Աի ոչրերորդ տարին, որուն մէջ կը դրուի հայ գրերուն գիւտը կամ «գարութիւնն Հայոց», ինչպէս կ'ըսէ կորեան, — Քրիստոսի ո՞ր թուականին կը համապատասխանէ.

3) Մեր գրերու գիւտին ժամանակ ո՞վ էր Եդեսիոյ եպիսկոպոսը :
Ա. կորեան, — որ այնքան ուշ է թուականէն, որ անտարակոյս շատերէն աւելորդ կամ անօգուտ պիտի դատուի անգամ մ'ալ այս խնդրոյս վրայ դառնալը : Սակայն, որքան գիտեմ և որքան թոյլ կու տայ ինձի յիշողութիւնս, ընդհանրապէս մեր բանասէրներուն մեծամասնութիւնը՝ եթէ ոչ ամէնը՝ այն եզրակացութեան յանգած են, որ Մաշթոց հայ տառերը ստեղծեր կամ յօրիներ է Քրիստոսի 404 թուականին, այն է՝ մեր վրամշապուհ թագաւորին վեցերորդ տարին, և կամ՝ որ նոյն է՝ Պարսից Յազկերտ Ա թագաւորին ոչրերորդ տարին, հիմնուելով կորեան վկայութեան վրայ : Արդ, այս մասին տարբերելով իմ տեսութիւնս յիշեալ բանասէրներուն կարծիքէն, թոյլ պիտի տրուի ինձի անշուշտ պարզելու հոս համառօտութեան տեսութիւնս, որ կը հիմնուի նոյնպէս կորեան վկայութեան վրայ : Հետեւաբար, ինչպէս ըսի նախորդ յօդուածիս մէջ, երեք խնդիր կայ հոս պարզելիք .

1. կորեան. էջ 20, 48. — 2. վրամշապուհ գահ բարձրացեր է 398 թուականին՝ վրամ-կորեանի հրամանով իր խօսքով եղբոր տեղ. որով իրեն ճիշգրտորդ տարին կ'ըլլայ Քրիստոսի 403 թուականը. — 3. կորեան. էջ 17.